Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 964-Ա որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր
## «ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ՓՈՔՐ ԽՄԲԱՅԻՆ ՏՆԵՐ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Միայնակ, խնամքի կարիք ունեցող հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց կենսապահովման նվազագույն պայմանների և կացարանի ապահովում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «ԱՄՔՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ քաղաք Երևան, Արաբկիր 27 փողոց, 12 տուն, ՀՎՀՀ՝ 00141643): |
| 4. | Ծրագրի կատարողը | «Ջերմիկ անկյուն» հիմնադրամ (հասցե՝ քաղաք Երևան, Սիլիկյան թաղամաս, 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, 14/16-1 տուն, ՀՎՀՀ ՝ 01242562): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ քաղաք Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Սիլիկյան թաղամաս, 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, 14/16-1 տուն, Կոտայքի մարզ, գյուղ Առինջ 20 փողոց, 6 տուն, Արարատի մարզ, համայնք Գեղանիստ, 27 փողոց, 23/1 տուն: Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 5,928,251 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | 1) Խմբային տան, որը գործում է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի, Սիլիկյան թաղամաս, 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, 14/16-1 տուն հասցեում, բնակիչները՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրներն ավարտած, մտավոր խնդիրներ ունեցող միայնակ անձինք: Ներկայումս խմբային տանը բնակվում են 17 երիտասարդներ (9 տղամարդ և 8 կին), ովքեր տեղափոխվել են քաղաք Կապանի թիվ 3, Փարաքարի թիվ 2 հատուկ կրթահամալիրներից, Գավառի մանկատնից, Լեռնային Ղարաբաղից:<br>2) Խմբային տան, որը գործում է Կոտայքի մարզի գյուղ Առինջ, 20 փողոց, 6 տուն հասցեում, բնակիչները՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրներն ավարտած, մտավոր խնդիրներ ունեցող միայնակ անձինք: Ներկայումս խմբային տանը բնակվում են 8 երիտասարդներ (4 տղամարդ և 4 կին), ովքեր տեղափոխվել են քաղաք Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրից:<br>3) Խմբային տան, որը գործում է Արարատի մարզի Գեղանիստ համայնք, 27 փողոց, 23/1 տուն հասցեում, բնակիչները՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրներն ավարտած, մտավոր խնդիրներ ունեցող միայնակ անձինք: Ներկայումս խմբային տանը բնակվում են 8 երիտասարդներ (8 կին), 7-ը տեղափոխվել են քաղաք Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրից, 1-ը՝ Լեռնային Ղարաբաղից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1) Խմբային տների բնական գազի, էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման և ջրահեռացման, հեռախոսակապի, գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայությունների մատուցում՝ 5,228,251 դրամ: Միջոցառումները նախատեսվում են իրականացնել 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում: |

| | | |
|---|---|---|
| | | 2) Հիմնադրամի ֆինանսական գործունեության վերաբերյալ տարեկան անկախ աուդիտի իրականացում՝ 700,000 դրամ: Աուդիտը նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունվար-փետրվար ամիսներին: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսված գինը | 1) Բնական գազի ծառայությունների մատուցում՝ 3,353,435 դրամ:<br>2) Էլեկտրաէներգիայի ծառայությունների մատուցում՝ 1,290,333 դրամ:<br>3) Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 469,374 դրամ:<br>4) Գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայությունների մատուցում՝ 67,109 դրամ:<br>5) Հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 48,000 դրամ:<br>6) Աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևանի քաղաքապետարանի, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի Գեղանիստ բնակավայրի, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև նախատեսվում է համագործակցություն միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ՝ շահառուների ընտրության շրջանակներում: |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | 1) «Ջերմիկ անկյուն» հիմնադրամը պարբերաբար և նաև իրենց պահանջով հաշվետվություն է ներկայացնում բարեգործին, իրականացնում է անկախ աուդիտորական վերահսկողություն:<br>2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազոր մարմին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ